# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**4 հուլիսի 2025 թվականի N 321 - Ա**

**ՆՎԵՐ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ «ՀԱՐԹԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ, ՆՐԱ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԵՎ ԳԱՅԱՆԵ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 39-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից ձևավորված մասնագիտական հանձնաժողովի դրական եզրակացությունը, 2025 թվականի հունիսի 18-ի հարցազրույցի N 290 Արձանագրությունը և Ն. Պողոսյանի դիմումը՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

1. 2025 թվականի հուլիսի 7-ից Նվեր Պողոսյանին նշանակել «Հարթաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն, նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:
2. Գայանե Հայրապետյանին 2025 թվականի հուլիսի 7-ից ազատել «Հարթաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումից:

Recoverable Signature

X Ստորագրող
ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆ
3712800290

Signed by: GHUKASYAN ROBERT 3712800290

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2025թ. հուլիսի 4
ք. Կապան